ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 1177

«14» սեպտեմբերի 2023թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք
Մարտունի,Շահումյան փողոց 2
☎ 060743401
☎ Էլ.փոստ՝ info@martuni.am

««Գ. Գ. Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ
ՀՎՀՀ (01053569)
ք. Երևան Մոլդովական փ. 48/1 25բն.
Հեռ: +37477666566

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի և «Գ. Գ. Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի միջև 13.06.2023թ. կնքված N ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/06-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «Գ. Գ. Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն պարտավոր էր 2023թ. ընթացքում Մարտունու համայնքապետարանի ենթակայության Մանկապարտեզների կարիքների համար մատակարարել՝

1. Բազուկ - 800 կգ
2. Նարինջ – 600 կգ
3. Կիսել – 2100 կգ
4. Ջեմեր – 650 կգ
5. Միս տավարի – 2700 կգ
6. Հավի կրծքամիս – 1600 կգ
7. Վարսակաձավարի փաթիլներ – 450 կգ

Քանի որ վերոնշյալ ապրանքները չեն մատակարարվել, ուստի հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները

խախտվել են 20 օրից ավելի)՝ Մարտունու համայնքապետարանը 2023թ. սեպտեմբերի 11-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «Գ. Գ. Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետարան 900145001484 հաշվեհամարին փոխանցել 121 180 (մեկ հարյուր քսանմեկ հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագիր 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 03.09.2023թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվը առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 2 328 250 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 3 492 375 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. սեպտեմբերի 20-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 2 328 250 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 3 492 375 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Գ. Գ. Է. ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված

կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. սեպտեմբերի 20-ը ներառյալ ներկայացնել Մարտունու համայնքապետարանի գնումների բաժին, 4-րդ հարկ:

Համայնքի ղեկավար Հ. Հովեյան

Կատարող՝ Է.Գրիգորյան
Բաժին՝ Գնումների բաժին
Հեռ. 077270194